



ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

20-21 ՆՈՅԵՄԲԵՐ, 2008, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ



PROCEEDINGS OF THE INTERNATIONAL CONFERENCE
THE IMPORTANCE OF ECOLOGY AND NATURE
PROTECTION IN THE SUSTAINABLE
DEVELOPMENT PERSPECTIVES

20-21 NOVEMBER, 2008, YEREVAN ARMENIA



ԹԵՂՈՏ ԳՅՈՒՂԻ՝ ՈՐՊԵՍ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԻՍԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ, ՇՐՋԱԿԱ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԴՈՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ղազարյան Կ., Գրիգորյան Կ.

Երևանի պետական համալսարան, Ա. Մանուկյան 1, 0025, Երևան, ԳԳ
E-mail: ghazaryank@mail.ru

Ուսումնասիրված տարածքում հանդիպում են լեռնանտառային դարչնագույն կրազերծված և լեռնանտառային դարչնագույն կարբոնատային հողեր իրենց որոշ տարատեսակներով: Լեռնանտառային դարչնագույն կրազերծված հողերը տարածված են ուսումնասիրված տարածքի բարձրադիր մասերում, հյուսիսային և հյուսիս - արևմտյան լանջերին: Լեռնանտառային դարչնագույն կրազերծված հողերի բնորոշ առանձնահատկություններն են.

1. հողային կտրվածքում հորիզոնների լավ տարաբաժանվածություն,
2. հումուսակուտակիչ և մետամորֆիկ շերտերում կարբոնատների բացակայություն, միայն չնչին քանակներով այն երբեմն հանդիպում է անցումային հորիզոնում,
3. հումուսակուտակիչ հորիզոնի մուգ - դարչնագույն և դարչնագույն սև գունավորում, իսկ մետամորֆիկ հորիզոնի՝ դարչնագույն գունավորում,
4. հումուսակուտակիչ հորիզոնի մանրաբարային - հատիկային և մետամորֆիկ հորիզոնի ընկուզա - քարային կառուցվածք,
5. հողային կտրվածքի միջին շերտի կավայնացում:

Այս տարածքի լեռնանտառային դարչնագույն կրազերծված հողերի հումուսային շերտը բավականին հզոր է (50 - 80 սմ): Վերին հորիզոնում հումուսի պարունակությունը հասնում է 8 - 9 %-ի, իսկ ածխածին ազոտ հարաբերությունը կազմում է 7,4 / 10,0: Հողային կտրվածքի բոլոր հորիզոններում միջավայրի ռեակցիան մոտ է չեզոքին (pH = 6 - 7):

Լեռնանտառային դարչնագույն կարբոնատային հողերը հանդիպում են ավելի արիդային շրջաններում, հիմնականում՝ հարավային և արևելյան լանջերին: Այս հողերի բնորոշ առանձնահատկություններն են.

1. բոլոր գենետիկական հորիզոններում կարբոնատների առկայություն,
2. մետամորֆիկ հորիզոնի թույլ կավայնացում,
3. հումուսակուտակիչ հորիզոնի դարչնագույն կամ մուգ - գորշ - դարչնագույն գունավորում,
4. հումուսակուտակիչ հորիզոնի հատիկա - քարքարոտ կառուցվածք,
5. հողային շերտի կարծրացում, հատկապես՝ միջին հորիզոնի:

Հումուսային շերտի հզորությունը այս ենթատիպի մոտ ավելի թույլ է (40 - 60 սմ): Հումուսի պարունակությունը վերին հորիզոնում 5 - 7% է, իսկ ածխածին ազոտ հարաբերությունը կազմում է 8,5 / 10,0: Հողային կտրվածքում խորանալուն զուգահեռ նկատվում է կարբոնատների քանակի ավելացում: Հողային միջավայրի ռեակցիան թույլ հիմնային է (pH = 7,5 - 8,5):

Հողը բնութագրվում է նաև բավարար խոնավության կուտակման հնարավորությամբ (մոտ 35%): Հողի ջրաթափանցելիությունը նույնպես բավարար է (մոտ 1 մմ/ր), որի հետ կապված լեռնանտառային դարչնագույն հողերը կարող են կլանել աշուն - ձմեռ - գարնանային ողջ տեղումները: Այս հողերում ջրակայուն ագրեգատների քանակը բավականին շատ են և կարող է հասնել մինչև 70%-ի: Ջրակայուն ագրեգատների կազմում գերակշռում են 1-3 մմ մեծության մասնիկները:

Այս ամենով է պայմանավորված այն փաստը, որ այս հողերը գրեթե երոզացված չեն: Միայն շատ ինտենսիվ տեղումների ժամանակ կարող է առաջանալ որոշակի մակերևույթային հոսք: Սա, իհարկե, հաճախակի չի հանդիպում և ուժեղ երոզիաառաջացման համար որոշակի վտանգ չի կարող հանդիսանալ: